ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 723-Ա

ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 28-րդ կետով և հիմք ընդունելով «Սլավիկ Միրիջանյան» Ա/Ձ-ի կողմից 18.05.2023 թվականին կազմված և 22.05.2023 թվականին համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրի 1-ին փողոց 13 շենքի կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի սահմանները՝ հաստատված Նոյեմբերյան համայնքի ղեկավարի կողմից և ԱՁ «Սլավիկ Միրիջանյանի» կողմից տրված հողամասի գլխավոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. մայիսի 22
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 724-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-ն որոշումը և հաշվի առնելով «ՀԵՑ» ՓԲ ընկերության դիմում հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կառուցապատող «ՀԵՑ» ՓԲ ընկերությանը տալ շինարարության թույլտվություն ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, գ. Հաղթանակ, 1-ին փողոց, թիվ 80 հասցեում հասցեում Հայկ Մակարի Սիրադեղյանին պատկանող տարածքի 0,4 կվ էլեկտրամատակարարման 8092-ԷՄ աշխատանքների համար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. մայիսի 22
գ. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 725-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող վարձակալությամբ տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձավճարները գանձել ըստ եռամսյակների:

2. Վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

3. Սույն որոշումը տարածվում է 2022 թվականի օգոստոսից մինչև 2023 թվականի մայիսը կնքված, սակայն եռամսյակային գանձումը չներառած պայմանագրերով վարձավճարի գանձման գործընթացի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. մայիսի 23
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 726-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 19.05.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 286 որոշումը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, հաշվի առնելով Նոյեմբերյանի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի 19.05.2023 թվականի թիվ 07 նիստի արձանագրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան գյուղ Դեբեդավան 11-024-0001-0077 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.16992 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Ասատուր Սեդրակի Վերդիյանին:
   1) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
2. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան գյուղ Դեբեդավան 11-024-0115-0015 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.76288 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Ալեքսանդր Ալբերտի Մովսեսյանին:
   1) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 14000 (տասնչորս հազար) ՀՀ դրամ:
3. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան գյուղ Դեբեդավան 11-024-0115-0012 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 1.40373 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական

նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Արսեն Ալբերտի Մովսեսյանին:
1) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 24000 (քսանչորս հազար) << դրամ:

4. << Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան գյուղ Դեբեդավան 11-024-0115-0013 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.62356 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Ալեքսանդր Ալբերտի Մովսեսյանին:
1) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 12000 (տասներկու հազար) << դրամ:
5. << Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան գյուղ Բաղանիս 11-017-0110-0264 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.67711 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Արմեն Ռաշիդի Ալավերդյանին:
1) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 15000 (տասնհինգ հազար) << դրամ:
6. << Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան գյուղ Բաղանիս 11-017-0110-0265 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.1686 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Մելինե Սենիկի Ալավերդյանին:
1) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 4000 (չորս հազար) << դրամ:
7. Ուժը կորցրած ճանաչել Նոյեմբերյանի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 07-Ա որոշման 2-րդ և 3-րդ կետերը:
8. Սույն որոշմամբ վարձակալության տրամադրված անշարժ գույքի համար սահմանված վարձավճարները գանձել ըստ եռամսյակների:
9. Վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:
10. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաներիբաժնի գլխավոր մասնագետ Գոհար Մալխասյանին՝ ապահովել վարձակալության տրամադրելու համար անհրաժեշտ փաթեթների կազմումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԽՈՒԲԲԱՅԱՆ

2023 թ. մայիսի 23
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 727-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Բերդավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ 11-019-0081-0008 կադաստրային ծածկագրով հողամասին և հողամասում առկա անշարժ գույքին տալ հասցե գրանցելով համայնք Նոյեմբերյան, գ. Բերդավան 29-րդ փողոց, 1-ին փակուղի 1 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4107:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. մայիսի 23
գ. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 728-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի՝ 11-004-0049-0039-001-021 կադաստրային ծածկագրով բնակարանի Նոյեմբերյան ք., Նոյեմբերի 137 փողոց, 7/21 հասցեն փոփոխել գրանցելով համայնք Նոյեմբերյան Նոյեմբերյան ք., Նոյեմբերի 29-ի փողոց, 7 շենք, 21 բնակարան հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 24
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 729-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-055-0339-0034 կադաստրային ծածկագրով 1.411 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը (խաղողը) փոխադրել նույն կարգի ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկի (կորիզավոր):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavushlamta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 730-Ա

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ և ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 10 հունիսի 2008 թվականի օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 12 օգոստոսի 2010 թվականի թիվ 1004-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողամասը չի մտնում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, ինչպես նաև ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ և չեն հակասում քաղաքաշինական նորմերին, ինչպես նաև հիմք ընդունելովՀիմք ընդունելով 18.05.2006 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության N 912-Ն որոշման կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 18-րդ կետերը, հաշվի առնելով Արմինե Ջահանի Գիշյանի՝ 11.05.2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժառանգության իրավունքով Արմինե Ջահանի Գիշյանի (ծնված 19.02.1968 թվականին) և Արմեն Ջահանի Սահակյանի (ծնված 07.02.1966 թվականին) սեփականությունը հանդիսացող, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի գյուղ բերդավան, 4-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 7 բնակելի տուն հասցեում գտնվող, 11-019-0103-0007 ծածկագրով 0.15 հա մակերեսով հողամասին կից ավել օգտագործվող 0.0138 հա հողամասի (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և հողամասում առկա արտաքին մակերեսով՝ 15.44 քմ խոհանոցի կառուցված 1960 թվականին, 4.95 քմ կաթսայատան կառուցված 1980 թվականին, 14.51 քմ մառանի կառուցված 1960 թվականին, 46.19 քմ մառանի կառուցված 1980 թվականին, 8.1 քմ փռան կառուցված 1979 թվականին և 18.21 քմ բաց պատշգամբի կառուցված 1980 թվականին ճանաչել

Արմինե Ջահանի Գիշյանի (ծնված 19.02.1968 թվականին) և Արմեն Ջահանի Սահակյանի (ծնված 07.02.1966 թվականին) սեփականության իրավունքը:

2. Արմինե Ջահանի Գիշյանին (ծնված 19.02.1968 թվականին) և Արմեն Ջահանի Սահակյանին (ծնված 07.02.1966 թվականին) սեփականության իրավունքով պատկանող Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի գյուղ բերդավան, 4-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 8 բնակելի տուն հասցեում գտնվող, 11-019-0103-0007 կադաստրային ծածկագրով հողամասում առկա 121 քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված անավարտ բնակելի տունը և 79.77 քմ մակերեսով պարիսպները ճանաչել օրինական (չափագրման տվյալների հաշվառման ծածկագիր 20232SKNWB):

1) Օրինական ճանաչված ընդհանուր 200.77 քմ արտաքին մակերեսով շինությունների համար սահմանել օրինականացման վճար՝ 175500 ((874x200.77) հարյուր յոթանասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2) Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված 175500 (հարյուր յոթանասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ.ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
գ.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 731-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0039-0012,11-004-0039-0013 և 11-004-0039-0014 կադաստրային ծածկագրերից միավորված ընդհանուր 0.00984 հա մակերեսով հողամասին և հողամասի վրա առկա շինությանը տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, ք. Նոյեմբերյան, Վ. Տերյան փողոց, 11 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ.ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavushi@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 732-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-043-0026-0031 կադաստրային ծածկագրով 0.00722 հա մակերեսով հողամասին և հողամասում առկա անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան գյուղ Հաղթանակ 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, 2 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ՝ 4111:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 733-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-055-0326-0002 կադաստրային ծածկագրով 0,689 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը (խաղողը) փոխադրել նույն կարգի ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկի (կորիզավոր):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 734-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-055-0315-0004 կադաստրային ծածկագրով 0,552 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել նույն կարգի ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկի (կորիզավոր):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 735-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-055-0326-0001 կադաստրային ծածկագրով 0,129 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել նույն կարգի ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկի (կորիզավոր):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՌԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
գ.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 736-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Նորոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33-րդ, 34-րդ, 34.2-րդ 35-րդ և 35.1 կետերով, հաշվի առնելով, որ Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող 11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող (ք. Նոյեմբերյան, Վ. Տերյան փողոց, 9/21 ավտոտնակ) 0.00479 հա մակերեսով՝ հողամասում առկա ինքնակամ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հաշվի առնելով Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանի կողմից տրված դիմումը՝ (հաշվառման ծածկագիր 2023AG3NZB)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով հողամասում (ք. Նոյեմբերյան, Վ. Տերյան փողոց, 9/21 ավտոտնակ) Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանի կողմից ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 47.89 քմ արտաքին մակերեսով կառույցը (ավտոտնակ):

2. Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով հողամասում (ք. Նոյեմբերյան, Վ. Տերյան փողոց, 9/21 ավտոտնակ) Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանի կողմից ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 47.89 քմ արտաքին մակերեսով կառույցի (ավտոտնակ) նկատմամբ ճանաչել Նոյեմբերյան համայնքի սեփականության իրավունքը՝ սպասարկման համար նախատեսված 0.00479 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամասով:

3. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին սույն որոշմամբ օրինականացված կառույցի (ավտոտնակ) նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկությամբ դիմել ինքնակամ կառույցն իրականացրած Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանին՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով ավտոտնակ՝ 57900 << դրամ արժեքով (47.89x1209) և նրա սպասարկման համար անհրաժեշտ 0.00479 հա մակերեսով հողամասը՝ 58500 << դրամ արժեքով (47.9x1221) ձեռք բերելու համար:

4. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Մ. ԱՂԱՄՅԱՆ**

2023 թ. մայիսի 25
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 737-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Նորոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33-րդ, 34-րդ, 34.2-րդ 35-րդ և 35.1 կետերով, հաշվի առնելով, որ Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Նոյեմբերյան, Վ. Տերյան փողոց, 11 բնակելի տուն հասցեում գտնվող 0.00984 հա մակերեսով՝ հողամասում առկա ինքնակամ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հաշվի առնելով Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանի կողմից տրված դիմումը՝ (հաշվառման ծածկագիր 2023LBQD9Y)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի, Վ. Տերյան փողոց, 11 բնակելի տուն հասցեում գտնվող 0.00984 հա մակերեսով հողամասում Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանի կողմից ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 157.97 քմ արտաքին մակերեսով կառույցը (երկհարկանի բնակելի տուն):

2.Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Վ. Տերյան փողոց, 11 բնակելի տուն հասցեում գտնվող 0.00984 հա մակերեսով հողամասում Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանի կողմից ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 157.97 քմ արտաքին մակերեսով կառույցի (երկհարկանի բնակելի տան) նկատմամբ ճանաչել Նոյեմբերյան համայնքի սեփականության իրավունքը՝ սպասարկման համար նախատեսված 0.00984 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամասով:

3. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին սույն որոշմամբ օրինականացված կառույցի (երկհարկանի բնակելի տան) նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկությամբ դիմել ինքնակամ կառույցն իրականացրած Վլադիմիր Սարգսի Բաբաջանյանին՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով բնակելի տուն՝ 573000 ՀՀ դրամ արժեքով (157.97x3627) և նրա սպասարկման համար անհրաժեշտ 0.00984 հա մակերեսով հողամասը՝ 120200 ՀՀ դրամ արժեքով (98.4x1221) ձեռք բերելու համար:

4. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
գ. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 738-Ա

ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ և ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով և 59-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.00479 հա մակերեսով հողամաս, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0039-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0.00479 հա մակերեսով հողամասին և հողամասի վրա առկա շինությանը տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, ք. Նոյեմբերյան, Վ. Տերյան փողոց, 9/21 ավտոտնակ հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 739-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 11-004-0039-0012 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.00401 հա, 11-004-0039-0013 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.00440 հա և 11-004-0039-0014 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.00143 մակերեսով հողամասեր՝ նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

2. Առանձնացված հողամասերը միավորել և որպես առանձին՝ 0.00984 հա մակերեսով գույքային միավոր պետական գրանցում կատարելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 740-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 11-043-0011-0010-001 կադաստրային ծածկագրով բազմաբնակարան շենքի Հաղթանակ 1-ին փողոց, 2-րդ շենք, 23 բնակարան հասցեում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող բնակարանի նկատմամբ պետական գրանցման ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 741-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի՝ 11-043-0022-0032 կադաստրային ծածկագրով հողամասին և հողամասում առկա շինությանը տալ հասցե գրանցելով համայնք Նոյեմբերյան, գ. Հաղթանակ 2-րդ փողոց, 14 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4111:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
գ.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 742-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0110-0037 և 11-004-0110-0092 կադաստրային ծածկագրերով հողամասերից միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե գրանցելով համայնք Նոյեմբերյան, ք.Նոյեմբերյան, Մայիսյան փողոց, 8 բնակելի տուն հողամաս հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2023 թվականի N 743-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով «ՌԵԿՈՆ» ՍՊԸ-ի կողմից 25.03.2022 թվականին հանութագրման և չափագրման արդյունքում 13.03.2022 թվականին տրված հողամասի հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել համայնք Նոյեմբերյան գյուղ Բերդավան 4-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 7 բնակելի տուն հասցեում գտնվող, 11-019-0103-0007 ծածկագրով հողամասի ճշտված սահմանները՝ ըստ կից ներկայացվող հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Մ. ԱՂԱՄՅԱՆ

2023 թ. մայիսի 25
գ.Նոյեմբերյան